



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՈՐՈՇՈՒՄ

19.10.2019թ. թիվ 3-Լ
ք. Երևան

«ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕՐ» ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 9.1-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) կանոնադրության 7.2, 7.4, 7.11, 7.12 և 8.7 կետերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 2013 թվականի փետրվարի 22-ի № 5/1-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի քվեարկության արդյունքների ամփոփման կարգի» 33-րդ կետի պահանջները,

հաշվի առնելով ««Փաստաբանի օր» սահմանելու մասին» օրակարգային հարցով ՀՀ փաստաբանների պալատի 19.10.2019թ. ընդհանուր ժողովի արդյունքների ամփոփման մասին Պալատի հաշվիչ հանձնաժողովի թիվ 2-Լ/ՓՕ արձանագրությունը,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովը,

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Ամփոփել ««Փաստաբանի օր» սահմանելու մասին» օրակարգային հարցով ՀՀ փաստաբանների պալատի 19.10.2019թ. ընդհանուր ժողովի քվեարկության արդյունքները, սահմանելով, որ քվեաթերթիկներ ստացած ընդհանուր 730 (յոթ հարյուր երեսուն) փաստաբանների՝ 427 (չորս հարյուր քսանյոթ) «Կողմ» (քվեաթերթիկ ստացածների 58,49%) ձայներով ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից որպես «Փաստաբանի օր» ընտրված (սահմանված) է համարվում՝ «դեկտեմբերի 6-ը»:

2. Հաստատել ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումը՝ համաձայն հավելվածի:

3. ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշումը համարվում է ընդունված սույն որոշման հրապարակման պահից:



Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ Ելաեւոնակ Պողոսյան

քարտուղար՝

Աշոտ Խլոյան



անդամներ՝

Արսեն Հարությունյան

Մարինե Ֆարմանյան

Գագիկ Մայիլյան

Սարենիկ Չաքարյան

Լեդինե Մանուկյան

Նահրա Ալավերդյան

Էրիկ Պետրոսյան



Հավելված
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի հաշվիչ
հանձնաժողովի
19.10.2019թ. թիվ 3-Լ որոշման



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ՈՐՈՇՈՒՄ**

19.10.2019թ. թիվ 3-Լ

ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը,

Ո Ր Ո Շ Ե Ց՝

- «Փաստաբանի օր» սահմանել «դեկտեմբերի 6-ը»:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի՝
նախագահ՝